ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 38/3

6 դեկտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Եղվարդ արտադրական բազա» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 28.10.2016թ. թիվ 1110246 ակտի դեմ:

«Եղվարդ արտադրական բազա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Եղվարդ արտադրական բազա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) աշխատանքային գործունեությունը սկսել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ ունեցած պայմանագրի և շինարարական թույլտվության հիման վրա, որը տրվել է 02.09.2016թ.-ին:

15.09.2016թ.-ին տեղի է ունեցել հիմնօրհներգի արարողություն, որը հեռարձակվել է հեռուստատեսությամբ:

02.09.2016թ.-ից հետո ընկերությունը ձեռնամուխ է եղել ինչպես նախկին աշխատողների, այնպես էլ նոր աշխատողների հավաքագրմամբ: Հավաքագրվել են անձնագրերի պատճենները, սոցիալական քարտերի պատճենները, քանի որ ընկերության աշխատողները համարվում են վտանգավոր օբյեկտների և մասնագիտությունների աշխատողներ (կռունկավար, մոնտաժնիկ, զոդողներ և այլն), որոնց համար պահանջվում է ուսումնական կենտրոնների թույլտվություններ:

Այն աշխատողների հետ, որոնք ունեցել են բոլոր փաստաթղթերը կազմվել է պայմանագիր, իսկ ովքեր չեն ունեցել փաստաթուղթ պահանջվել է ներկայացնել, քանի որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր աշխատողի համար գրանցման հայտը հարկային մարմին է ներկայացվում այդ աշխատողի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց ոչ ուշ:

Բոլոր աշխատողներին, այդ թվում նաև ակտում նշված Սաղմոսավանի տեղամասի աշխատակիցներ՝ Շահնազարյան Լյուդվիգ, Մկրտչյան Սեդրակ, Նուրիջանյան Սամվել, օրենքով նախատեսված ժամկետում ներկայացվել է հարկային մարմին, ինչպես նաև սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվության մեջ: Ընկերությունը գործել է ՀՀ օրենքի շրջանակներում:

Ինչ վերաբերվում է Ալբերտ Խաչատրյանին, ապա տեղի է ունեցել թյուրիմացություն, քանի որ նա աշխատում է որպես մեխանիզատոր-կցորդող, այլ ոչ թե բանվոր-կցորդող և նրա պայմանագիրը եղել է Օշականի աշխատողների ցանկում, սակայն թյուրիմացաբաբ Սաղմոսավանում նույնպես կազմվել է 2-րդ պայմանագիրը:

Այս փաստը հիմնավորվում է նաև ակտով և տեսուչների կողմից կազմված արձանագրությունով:

Ալբերտ Խաչատրայանի պայմանագիրը ներկայացվել է հարկային տեսուչներին և նրանք էլ Օշականի տեղամասի աշխատակիցների հետ կատարել են հաշվառում և ընդգրկել են Օշականի ցանկի մեջ, իսկ պատճենը գտնվում է տեսուչների մոտ, որն էլ հետ է ուղարկվել:

Քանի որ խախտվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետը, 25 հուլիսի 2013թ. N 1259-Ն որոշման 4-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ

ենթակետերը, 5-րդ կետը, 6-րդ կետը ընկերությունը խնդրում է քննարկել առարկությունները և ակտում նշված Սաղմոսավանի տեղամասի աշխատակիցներ Լյուդվիգ Շահնազարյանին, Սեդրակ Մկրտչյանին, Սամվել Նուրիջանյանին և մեխանիզատոր-կցորդող Օշականի տեղամասում գրանցված Ալբերտ Խաչատրյանին չհամարել որպես չգրանցված աշխատողներ և նրանց նկատմամբ չկիրառել տույժեր և տուգանքներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.09.2016թ-ի թիվ 1110246 հանձնարարագրի համաձայն «Եղվարդ արտադրական բազա» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 28.10.2016թ. թիվ 1110246 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 2.100.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությանը պատկանող ք.Երևան, Լեռ Կամսարի 30 հասցեում գտնվող մանկապարտեզում, գ.Օշական հասցեում գործող երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրամասում, գ.Սաղմոսավան հասցեում գործող շինարարությունում և գ.Քասախ, Աշտարակի խճուղի 2բ հասցեում գտնվող գրասենյակում աշխատանքային գործունեություն էին իրականացնում թվով 22 (քսաներկու) վարձու աշխատողներ: Ընկերության կողմից ներկայացվել է թվով 22 աշխատանքային պայմանագիր: Իրականացված ստուգման ընթացքում կատարվել է համադրումներ՝ գործատուի կողմից կնքված գրավոր աշխատանքային պայմանագրերի, աշխատանքի ընդունման մասին իրավական ակտերի և ստուգման պահին (ստուգվող ժամանակահատվածում) փաստացի վարձու աշխատանք կատարող (կատարած) անձանց թվաքանակների միջև: Համադրմամբ պարզվել է, որ գ.Սաղմոսավան հասցեի թվով երեք աշխատակիցների՝ Շահնազարյան Լյուդվիգի, Մկրտչյան Սեդրակի, Նուրիջանյան Մամվելի և գ.Օշական հասցեում աշխատող Խաչատրյան Ալբերտի աշխատանքային պայմանագրերում առկա էին միայն աշխատողի անունները, ազգանունները և աշխատողների ստորագրությունները, ինչպես նաև ընկերության թվով երեք վարձու աշխատակիցներ՝ Ավետիսյան Սմբատը, Ավետիսյան Հայկը և Ինջիղուլյան Գալուստը ստուգմամբ ընդգրկված տարբեր ժամանակահատվածներում ընկերությանը պատկանող մեքենաներով, որպես վարորդ, տեղափոխել են բեռներ (հիմք՝ ընկերության կողմից դուրս գրված հաշիվ ապրանքագրերը, ընկերության տնօրենի գրավոր հայտարարությունը), սակայն վերջիններիս հետ կնքված չէին գրավոր աշխատանքային պայմանագրեր և բացակայում էին օրենքով սահմանված իրավական ակտերը:

Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի, 83, 84 և 85-րդ հոդվածների պահանջները: Արդյունքում պարզվել է, որ ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 25-ի թիվ 1259–Ն որոշմամբ հաստատված, սույն ակտին կից և

անբաժանելի մաս հանդիսացող թիվ 2 հավելվածում արտացոլված թվով 7 վարձու աշխատողներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէին: Նշված խախտման համար կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի գ) ենթակետով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 2.100.000 դրամ:

Տվյալ դեպքում ստուգմամբ արձանագրվել է, որ գ.Սաղմոսավան հասցեի թվով երեք աշխատակիցների՝ Շահնազարյան Լյուդվիգի, Մկրտչյան Սեդրակի, Նուրիջանյան Մամվելի և գ.Օշական հասցեում աշխատող Խաչատրյան Ալբերտի վերաբերյալ ստուգումն իրականացնող անձանց ներկայացված աշխատանքային պայմանագրերը կազմված են եղել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտմամբ, մասնավորապես՝ դրանցում առկա են եղել միայն նշված աշխատակիցների անունները, ազգանունները և վերջիններիս կողմից դրված ստորագրությունները:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ նշված թվով 4 աշխատակիցների վերաբերյալ որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթները, որի համաձայն՝ հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել նոր աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) համար գրանցման հայտ (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ հանդիսացող աշխատողների):

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերությունը գործունեությունը սկսել է իրականացնել 2016թ-ի սեպտեմբեր ամսից և նշված թվով 4 աշխատակիցներն ընկերությունում աշխատանքային գործունեություն են սկսել իրականացնել 2016թ-ի սեպտեմբերից: Հաշվի առնելով նշված հանգամանքը և ղեկավարվելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներով ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են այդ աշխատակիցների համար գրանցման հայտերը:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատը, որը վերաբերվում է վերոգրյալ թվով 4 աշխատակիցների աշխատանքի ընդունումը սահմանված կարգով չձևակերպված չդիտարկելուն և այդ մասով լրացուցիչ պարտավորություններ չհաշվարկելուն, ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 28.10.2016թ. թիվ 1110246 ակտի 1-ին կետով առաջադրված եկամտային հարկը նվազեցնել 1.920.000 դրամով:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**